ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան-10, Հանրապետության
Հրապարակ, Կառավարական տուն 3.
Հեռ.(011) 52-19-64.Ֆաքս (011) 52-63-65
Էլ. փոստ: minenergy@minenergy.am
Վեբ կայք: www.minenergy.am

01ԳԲ/18ԱՆՄ/1958-19
05.04.19թ.

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2019 թվականի ապրիլի 2-ի թիվ 341-91 գրության՝ տեղեկացնում եմ, որ հարցման ժամանակահատվածում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հաշվեկշռում հաշվառված է թվով ինը շահագործվող տրանսպորտային միջոց, որոնցից յոթ տրանսպորտային միջոցի համար կազմված անհրաժեշտ ելակետային տվյալների փաթեթը ՀՀ պետական գույքի կառավարման նախարարի 2001 թվականի սեպտեմբերի 4-ի «Մասնավորեցվող պետական գույքի գնահատման համար անհրաժեշտ ելակետային տվյալների փաթեթը հաստատելու մասին» N223-Հ հրամանով հաստատված ձևերին համապատասխան օտարման նպատակով 2019 թվականի մարտի 28-ի թիվ 01ԳԲ/18ԱՆՄ/1958-19 գրությամբ ներկայացվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն:

Նախարարությունում ներկայումս աշխատում է մեկ վարորդ, որը օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցվել է հնարավոր կրճատման մասին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՏԱՇԵՍ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Կատարող՝ տնտեսական բաժնի պետ
Արթուր Համբարձումյան
Հեռ /011/ 52-35-81